

**ՍՈՐՏԱՅԻՆ ՈՒ ՄԵՐՄԱՅԻՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ
ՈՐՊԵՍ ՅՈՐԵՆԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ
ԿԱՐԵՎՈՐ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ**

Ա.Ա. Գուլյան

Գյուղատնտեսություն առօրին

ԼՂՀ-ում հացահատիկի տնտեսական արտադրության հստակեցված կազմակերպումն ու ապահովագրական չափաբանակներով աճեցումը մի շարք հանգամանքներով ռազմավարական ու կենսական նշանակություն ունեցող հիմնախնդիր է:

Հացահատիկային մշակաբույսերի շարքում հիմնական տեղը պատկանում է աշնանացան ցորենին, որը զբաղեցնում է հացահատիկային մշակաբույսերին հատկացվող ցանքատարածությունների շուրջ 85%-ը, կամ 31176 հա՝ 1998թվականին եւ 23211 հա՝ 1999թ-ին (տես ԼՂՀ տնտեսությունը, վիճակագրական-վերլուծական տարեկան զեկուցագիր, Ստեփանակերտ-2000թ.):

Ցորենի տնտակարար կշիռը մեծ է նաեւ համախառն բերքում: Ըստ տարիների (1998 եւ 1999թթ) կազմել է 85,5 եւ 89,5%:

Վերջին տարիների վիճակագրական տվյալների համաձայն 1999 թվականին 1998թ-ի համեմատ հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունը զգալիորեն կրճատվել է, 36793 հա-ից հասնելով 26503,8 հա-ի: Ըստ որում, այդ կրճատումը տեղի է ունեցել առավելապես հիմնական մշակաբույսի՝ ցորենի ցանքատարածության հաշվին (ավելի քան 25%-ով):

Նարկ է նշել, որ 1999 թ-ին ցորենի բերքատվությունը զգալիորեն բարձր է եղել՝ 12,54 ց, 1998-ի 7,7-ի դիմաց, որի շնորհիվ նրա համախառն բերքը ոչ միայն չի նվազել, այլ շոշափելի չափով աճել է, 23,9 հազար տոննայից հասնելով 29,1 հազ. տոննայի: Դա ապացուցում է, որ էքստենսիվ ճանապարհով (ցանքատարածությունների ընդարձակմամբ) հացահատիկի արտադրության ավելացումն ամենելին էլ արդյունավետ եղանակ չէ եւ շատ ավելի կարնոր է այն իրականացնել միավոր տարածությունից ստացվող բերքի, այսինքն բերքատվության բարձրացման հաշվին: Արդեն 2003թ-ին արտադրվել է 83,8 հազ.տ. հացահատիկ, որը մոտ 41% ավելի է նախորդ տարվա ցուցանիշից:

Իսկ հացահատիկի միջին բերքատվությունն աճել է, հասնելով 21,3ց-ի, որը բավական լավ ցուցանիշ է:

Եթե հաշվի առնենք, որ մեկ հա հացահատիկի մշակության համար կատարվող ծախսերի ողջ համախիթը կազմում է մոտ 100-120 հազար դրամ, ապա հատկանալի է, որ ամեն մի հա-ից թեկուզ մեկ ց-ով ավելացրած բերքը նշանակալիորեն կիջեցնի բերքի ինքնարժեքը եւ կավելացնի հացահատիկի արտադրության շահութաբերությունը:

Սակայն դա չի նշանակում, թե պետք է կրճատել ցանքատարածությունները եւ այդ եղանակով նվազեցնել մշակության համար կատարվող ծախսերը:

Նկյտյալորելի է, երբ գյուղատնտեսության համար պիտանի հողատարածքները թողնվում են անմշակ, վերածելով խոտաբույսերի կամ արոտավայրերի, իբր մեկ կամ մի քանի տարի հողին հանգստանալու հնարավորություն տալով: Դա ոչ միայն չի բարելավում հողի բերրիությունը, այլ նաեւ մոլախոտերով վարակվելու պայման է ստեղծում, ինչպես նաեւ քարենապատ պայմաններ՝ մկանաման կրծողների բազմացման համար: Դարաբաղում հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները, կարելի է ասել, միշտ էլ աղոթված են եղել այնպիսի մոլախոտերով, ինչպես խրփուկը, մուխսորգոն շաղգամը եւ դլդանը:

Եթե վերջին երկուսի դեմ ոչ դժվարությամբ կարելի է պայքարել հերբիցիդների օգնությամբ (2,4 ԺԺ՝ ամինային ադ. ֆենագոն), ապա շատ ավելի վտանգավոր մոլախոտեր են

խրվուկը և մուստորգոն, որոնք ինչպես հայտնի է, հաճազվել են և սովորական հերթիցիդներով վերացնել հնարավոր չէ: Հատկապես խրվուկը հաճաքույսերի (ցորեն, գարի) համեմատությամբ ավելի վառահաս է, պայմանների նկատմամբ ոչ պահանջկոտ և փայթամ աճ տալով ոչ միայն ճնշում է նրանց, այլ ինքնացան (սերմերը հատումանալուց թափվում են) ձնով տարածվում ու ցանքերն ավելի ու ավելի է աղտոտում իրենով:

Նշված մուլխոտներով ցանքերի համատարած վարակվածություն է տնդի ունեցել հատկապես հողի սեփականաշնորհումից հետո, ցանքաշրջանառություն չկիրառելու և միևնույն դաշտում նույն մշակաբույսը մի քանի տարի շարունակ ցանելու՝ (մոնոկուլտուրայի) պատճառով: Մուստի այդ մուլխոտների դեմ պայքարի ու հացահատիկային մշակաբույսերի ցանքերից բարձր ու կայուն բերք աճեցնելու ամենից հիմնական ուղին ցանքաշրջանառության կիրառումն է, հատկապես սև ցմիկ կատարման պայմաններում: (Այս հարցը այլ քննարկման առարկա է):

Բնորատվությունը պայմանավորված է սորտով և մշակության տեխնոլոգիայով: Մի կողմ թողնելով մշակության տեխնոլոգիան, նշենք, որ սորտի դերը կարևորվում է մի քանի ասպեկտով:

Նախ՝ սորտը տնդայնացնելու ժամանակ պետք է հաշվի առնել տվյալ գոտու հողակլիմայական պայմաններում նրա հարմարվողականությունը, ապա սորտային-կենսաբանական (պոտենցյալ բերք գոյացնելու) առանձնահատկությունները և վերջապես, ցանքի համար օգտագործվող սերմի որակը կամ պիտանիությունը՝ սորտային մաքրությունը և այլն:

Հարկ ենք համարում նշել, որ մաքուր սերմացու աճեցնելու համար բավարար չէ բարձր վերարտադրության սերմացու ցանելը: Անհրաժեշտ է, որպեսզի այդ սերմացուն ցանվի մաքուր դաշտում՝ ցմիկ, շարահերկի կամ թազմամյա խոտերի տնդում, քայց ոչ հացահատիկային մշակաբույսից ազատված դաշտում, որտեղ բերքահավաքից հետո թափված հատիկը ծլում և հացդող տարվա ցանքում խառնուրդ է առաջացնում:

Բարձր բերքատվություն ապահովելու և ի վերջո հացահատիկի արտադրությունն ավելի շահավետ դարձնելու համար կարևոր դեր ունի մշակվող սորտի ծիշտ ընտրությունն այն առումով, որպեսզի այն ունենա բարձր հարմարվողականություն տնդի պայմաններում, արդյունավետ օգտագործի հողում նեղած սննդային տարրերը և խոնավությունը ու գոյացնի հնարավորին չափ բարձր բերք:

Մյուս կողմից արտերկրից սորտերի ու սերմացուի ներկրումը ոչ միայն կապված է ֆինանսական ու տնտեսական լրացուցիչ ներդրումների հետ, այլ նաև միշտ չէ, որ ներկրված սորտերը տնդում դոսնորում են թավարար հարմարվողականություն ու բերքատվություն: Բացի այդ անհրաժեշտություն է առաջանում ամեն տարի ներկրել նոր սորտեր և սերմացու:

Ուստի շատ ավելի նպատակահարմար, հուսալի ու շահավետ է տնդական սորտերի սերմնաբուծություն կազմակերպումը, որը նաև կվերացնի արտերկրից կախվածությունը:

Դրա համար ՀՀ Երկրագործության ու բույսերի պաշտպանության գիտական կենտրոնի սելեկցիոներների կողմից բուծված 5 արտադրական և 12 հեռանկարային սորտեր քիչ չափաքանակներով (50-ական կգ և 5-ական կգ) բերվել և փորձարկման են դրվել ԼՂՀ-ի պայմաններում, լավագույն ստուգիչ սորտերի կողքին:

Փորձարկվող սորտերի թվում լավ արդյունք կարելի է ակնկալել նախկինում ստուգված Նարիի 68, ինչպես նաև Անի 326, Լավվար, Արցախ, Վարանդա (Լ-10), Ամարաս (Է-149 Ե) և այլ սորտերից, որոնց կենսաբանական պոտենցյալ բերքատվությունը 100-120ց է, ունեն խոշոր (8-12սմ) հասկ, հասկի հատիկների թիվը 50-70 է: Նրանք կարմրահատ և սպիտակահատ են, հատիկները միջին մեծության ու ավելի խոշոր են (1000 հատիկը կշռում է 40-55գ): Մախտակուցի ու սոսնձանյութի պարունակությամբ չեն զիջում լավագույն ստանդարտ սորտերին: Հատիկը ունի ձավարային ու հացաթխման լավ հատկություններ:

Բոլոր սորտերը վաղահաս և միջահաս են: Ունեն միջին բարձրության (90-110սմ), չափավոր ցողուն: Բավարար չափով դիմացկուն են էիմնական սնկային հիվանդությունների հանդեպ:

Սորտերի տեղայնացման գործընթացն արագացնելու նպատակով փորձարկման հետ գուգահեռաբար հիմնվել է սերմնաբուծական առաջին տարվա ընտրության տնկարան՝ (ավելի քան 2500 ընտանիք), որը հնարավորություն կտա լայն արտադրական մշակության համար առաջարկվող սորտի սերմնաբուծության աշխատանքները ծավալելու՝ առանց տարի կորցնելու:

Մշակվող սորտի ժառանգականությամբ պայմանավորված բերքային ու որակական պոտենցիալ հնարավորությունները պահպանելու և օգտագործելու խնդրում անչափ մեծ է սերմնաբուծության դերը: Իզուր չէ, որ սերմնաբուծությունն այլ կերպ կոչվում է պահպանողական սնվելիցիա: Սերմնաբուծության բազմակայության դեպքում սորտ հասկացողությունը կորցնում է իր իմաստը, քանի որ շատ արագ կներպղծ ադոտոլում է խառնուրդներով, կորցնելով իրեն տիպիկ լավագույն հատկանիշները:

Սերմնաբուծությունը ներկարատն է և պարտադիր կներպղծ կրկնվող գործընթաց է, բաղկացած մի շարք փուլերից: Ամեն մի սորտի համար այն սկսվում է նրան տիպիկ հասկերի ընտրությամբ: Հստ որում, կախված տվյալ սորտի տարածման արեալից կարող է վերցվել 500, 1000 և ավելի հասկ:

Առաջին փուլում այդ հասկերը կախվում են առանձին-առանձին, իսկ ստացված սերմերը ցանվում են առանձին շարքերով՝ մեկ հասկի սերմը մեկ շարք, որոնք կազմում են առանձին ընտանիքներ:

Վեգետացիայի ընթացքում ընտանիքները գնահատվում և համեմատվում են իրար հետ, ապա ընտրվում են միայն սորտին տիպիկ ընտանիքները, որոնք նաև կախվում են առանձին-առանձին՝ ըստ հատիկի համեմատելու, գնահատելու և կրկնակի ընտրություն կատարելու համար:

Երկրորդ փուլում (երկրորդ տարվա ընտրության տնկարան) ուսումնասիրվում են ընտրված ընտանիքները, որոնք նա ցանվում են առանձին-առանձին, դարձյալ հնարավոր շնորհմանից ազատվելու և միայն սորտի տիպը ներկայացնող ընտանիքներն ընտրելու համար:

Երրորդ փուլում ընտրված ընտանիքները միացվում են նոսր ցանքի պայմաններում դրվում են բազմացման (կոչվում է բազմացման տնկարան):

Չորրորդ փուլում բազմացման տնկարանից ստացված սերմը գտվում է ցանվում է՝ սուպերելիտա ստանալու համար:

Հինգերորդ փուլում սուպերելիտա սերմացուն ցանվում է՝ էլիտա ստանալու համար:

Դրան հաջորդում է առաջին, ապա երկրորդ վերարտադրության սերմի ստացումը: Այստեղ նշենք, որ պարենային հատիկ ստանալու համար միանգամայն քավարար է I և II վերարտադրության սերմի օգտագործումը:

Սկսած բազմացման տնկարանից կիրառվում է նեգատիվ ընտրություն կամ սորտային քաղհան՝ սորտին ոչ տիպիկ բույսերը կամ մեխանիկական խառնուրդները վերացնելու նպատակով:

Միումաբուծական բոլոր ցանքերում, սկսած բազմացման տնկարանից, բերքահավաքից առաջ կատարվում է ցանքերի ապրոբացիա. ստուգվում է տվյալ մշակաբույսի այլ սորտերով կամ այլ հացազգիների բույսերով ադոտոպիստությունը, մոլախոտերի քանակը, տիպերը, սնկային հիվանդություններով վարակվածությունը և կազմվում համապատասխան ակտ:

Հունձը պետք է կատարել միայն մաքուր կոմբայնով, որպեսզի այն սորտի կամ մշակաբույսի հատիկներ չլինեն նրա մեջ, իսկ հատիկը պետք է հակավորել նոր պարկերում և պահեստավորել նախապես խառնանված ու մաքրված պահեստում, որտեղ բացի տվյալ սերմացուից այլ հատիկ չի կարող պահվել:

Միումացուն գտնվուց հետո նաև հակավորվում է մաքուր պարկերում և էտիկետավորվում, որի վրա նշվում է սորտը, սերմի կարգը (թե որ տնկարանից է հնձված): Որոշ դեպքերում մեծ քանակը կարող է պահվել և կույտով:

Այնուհետև ամբողջ սերմից վերցվում է նմուշ (2կգ.)՝ սերմ ստուգող (աբորատորիայում) նրա սորտային մաքրությունը, զանազան խառնուրդների չափը, սնկային հիվանդություններով վարակվածությունը և վերջապես ծլունակությունը որոշելու համար:

Բոլոր այս տվյալների հիման վրա լրացվում է սերմի մասին վկայական և տրվում բաշխվող սերմի հետ միասին:

Սերմնաբուծական այս գործընթացը կրկնվում է յուրաքանչյուր երեք - հինգ տարին մեկ, պարբերաբար արտադրությունն ապահովելով նոր ու որակյալ սերմանյութով:

Այս ամենը ներկայացվում է ոչ նրա համար, որ ամեն մի հողատեր իր համար սերմնաբուծությանը զբաղվի: Բնավ ոչ: Դա հնարավոր էլ չէ: Պարզապես ուզում ենք ցույց տալ գործի բժախնդրությունն ու կարելիությունը:

Սերմնաբուծությունն այդ գործի համար իրավասություն (լիցենզիա, թույլտվություն) ձեռք բերած կազմակերպության մենաշնորհն է:

Իսկ հացահատիկի արտադրությանը զբաղվող մասնավոր և կոլեկտիվ տնտեսվարող սուբյեկտներին հարկ ենք համարում ևս մեկ անգամ հիշեցնել, որ որակյալ սերմացուի համար վճարված գինը թանկ չհամարեն, այն միշտ էլ արդարացնում է իրեն:

Ամփոփում

Հոգվածում ամփոփվում են ԼՂՀ-ում հողի մասնավոր սեփականատիրության պայմաններում աշնանագան գործնի մշակության, ցանքատարածությունների փոփոխության, բերքատվության և համախառն բերքի արտադրության տվյալները:

Արժարժվում են բերքատվության բարձրացման նպատակով նոր՝ արդյունավետ սորտերի ներդրման և սերմնաբուծության կազմակերպման անհրաժեշտության խնդիրները:

Համառոտ տրվում են սերմնաբուծության օղակները և նրանցում տարվող աշխատանքները:

Резюме

В НКР основной продовольственной культурой является хлебопекарная пшеница и увеличение ее производства имеет жизненно важное значение.

В последние несколько лет намечается тенденция расширения посевов и повышения урожайности этой культуры.

В повышении урожайности пшеницы важное значение имеют правильный выбор сорта для каждой агроклиматической зоны и использование качественных семян. Все это поможет повысить рентабельность возделывания пшеницы и увеличить доходы земледельцев.

Для решения этих проблем частично нами проводятся испытание озимой пшеницы селекции НИЗ и ЗР РА: Ани, Лалвар, Арцах, Амарас и др; обладающие очень высокой потенциальной урожайностью (100-120ц/га).

Одновременно заложены семеноводческие питомники для более перспективных сортов Ани, Арцах и Амарас, которые проходят производственное испытание на сравнительно больших площадях.

В статье очень доступно изложены принципы первичного семеноводства для заинтересованных и компетентных фермерских хозяйств.